



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3812

281.6
—
4-21

1902

281.6 այ
4-21

(68)

ար 30

ԿԱՆՈՆԸՆԴԲՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԽԱԿԱՆ ՀՈՂՈՎՆԵՐԻ, ԵՐԵՑՓՈԽ
ԹԻ ՀԱՇՈԽԵՏԵՍԱՅ, ՔԱԶԱՆԱՅԻՑ ԵՒ ՔԱԶԱՆԱՅ
—ԳՈՐԾԱԿԱԼԱՅ ՊԱՐՍԿԱ—ՀՆԴԿԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՅ ԹԵՄԻԿ

1902

Ի ՑՊԱՐԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ Ս. ՎԱՆԱՑ
ՃՈՒՂԱՑՈՒ—ՍՊԱՀԱՆ

281.6
4-21

ԱՄՈՒՋՐԱՐԱՐ

Բ 2001

Տ 0 1 7

25263-Կ.Դ

Հաստատելով սոյն կանոնադրութիւնը
հրամայեմք ըստ այս գործադրել

ԱՈՀԱԿ ՈՒԹ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎՈՑՆԱՆ
Ա.Ջ.ՋՈՒՆ ՀԱՅՈՑ ՊԱՐՈԿՈ.—ՀԱԴԿԱՍՏԱՆԻ

1 Մեպ. 1902 թ.
ի Վասն Ամենափրկչեան
ի Զուղա

ԿԱՆՈՆՍ.ԴՐՈՒԹ.ԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԽՈԿԱՆԱՑ, ԵՐԵՑՓՈԽ ՈՒ ՀՅԵՒԽ-
ՏԵՍԱՑ. ՔՈՀՈՆՈՑԻՑ ԵՒ ՔՈՀՈՆՈՑ—ԳՈՐԾԱ-
ԿՈԼՈՑ ՊԱՐՈԿՈ.—ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

1. Խւրաբանչիւր քաղաքի թաղերում և գիւ-
ղերում բնակւող Հայ բնակիչներն կազմում են նոյն
թաղի կամ գիւղի եկեղեցւոյ ծխական ժողովուրդը :
2. Որ և է եկեղեցւոյ ծխական կարող են հա-
մարուել այն անձինք (թէ եկւոր և թէ ընիկ), ո-
րոնք առ նուազն վեց ամսից ի վեր բնակութիւն
հաստատել են այն տեղում :
3. Մի Հայ մի և նոյն քաղաքում կամ գիւղում
իրաւունք ունի մի եկեղեցւոյ ծխական լինել, եթէ
եկեղեցիների թիւը մէկից աւելի է :
4. Ծխական ժողովների մասնակցելու և պաշ-



4390-56

տօններ ստանձնելու իրաւունք ունին բոլոր այլ
մարդիկ, ակսած 25 տարեկանից :

5. Ընտրելու և ընտրւելու իրաւունքից զբրկ-
ռում են այն անձինք.—

ա.—Որոնց Հոգեոր Դշխանութիւնը դա-
տաստանաւ զրկել է :

բ.—Որոնք ընդունուած և Հոգեոր իշ-
խանութեան կողմից սահմանուած
տուրքերը չեն վճարել (աղքատները
ազատ են տուրք վճարելուց) :

գ.—Որոնք եկեղեցական փողեր են վերց-
րել մուրհակով և ժամանակին չեն
ուզում վճարել :

դ.—Որոնք հակառակ Հայտատանեալց Ե-
կեղեցւոյ սահմանած կանոնների, ա-
մուսնութեան խորհուրդը կատարած
են օտար եկեղեցում :

6. Ծխական ժողովներում բոլոր հարցերը ձայ-
ների մեծամասնութեամբ են որոշուում. իսկ երբ
ձայները երկու կողմից հաւասար բաժանուեն, նա-
խագահը որ կողմին քուէն տալ, այն կողմը գերա-
կշռում է :

7. Կանոնաւոր ծխական ժողովներում կադ-
մուած և ստորագրուած համախօսականները և ո-
րոշումները օրինական են. իսկ ժողովներից դուրս

կազմուած որոշումները և համախօսականները ոչ
մի օրինական ոյժ չունին և ուշադրութեան չեն առ-
նուիլ Հոգեոր Դշխանութեան կողմից :

8. Ծխական ժողովի վերաբերեալ որ և է գոր-
ծի նկատմամբ խարդախութիւն կամ կեղծիք անող
անձը զրկում է ծխական իրաւունքներից կամ
ժամանակաւորապէս և կամ ընդ միշտ :

9. Ծխական ժողովի իրաւունքն է—

ա.—Ընտրել քահանայացուներ և եկեղե-
ցական սպասաւորներ. եկեղեցւոյ ե-
րեցփոխներ, հաշուետեսներ և կրթա-
կան հաստատութեանց համար Հո-
գաբարձուներ :

բ.—Հոկել եկեղեցական գումարների և
կալուածների դրութեանց վրայ քըն-
նել ընտրեալ պաշտօնեաների գոր-
ծունէութիւնը և լանցաւոր ճանա-
չուած դէպքում յայտնել Հոգեոր
Դշխանութեան :

գ.—Հոգ տանել Քահանաների և այլ եկեղե-
ցական պաշտօնեաների տնտեսական
դրութիւնը բարելաւելու համար :

դ.—Աշխատել դպրոց բաց անել և նորա
պահպանման համար դրամական հա-
սոյթների աղբիւրներ սահմանել :

10. Ծխականների պարտքն է—

ա.—Իւր բնակած թաղի կամ գիւղի ե՛շ-
ղեցւոյ և դպրոցի ծախուց մասնակցել

բ.—Պարսկա—Հնդկաստանի Թեմակալու-
թեան և Ամենափրկչեան Վանուց
ընդհանուր ծախսերին պարտի մաս-
նակցել, ընդունուած և Հոգեսոր Իշ-
խանութեան կողմից որոշուած տուր-
քերը անտրտունջ վճարելով :

11. Ծխական ժողով հրաւիրելու իրաւունք
ունի, գիւղերում ծխական քահանան երեցփոխի և
հաշուետեսների խորհրդով իրաւունք ունի ժողով
հրաւիրելու նախապէս Գործակալ քահանայից թուլ-
տուութիւն ստանալով :

Մանօթութիւն.—Զուղայում ժողովի թոյլաւութիւն պէտք
է ստանալ Առաջնորդական Խորհրդարանից . իսկ Խաչտ,
Ղազին, Շիրազ և Բուշեռ քաղաքներում—վիճակաւոր
Քահանայից .

12. Ժողովի հրաւէրը պիտի լինի գրաւոր, որը
պիտի փակցուի պատերին ժողովի օրից առ նուազն
երեք օր առաջ. իսկ Քահանան պարտի ժողովի մա-
սին ծանուցում անել Եկեղեցում :

13. Ժողովի հրաւիրաթղթում անպայման պի-
տի նշանակուեն այն խնդիրները, որոնց մասին
ժողով է կալանալու :

14. Ծխական ժողովների նիստը լինելու է ե-

կծղեցու բակում եղած սենեակներից մինում, եթէ
կան յարմարաւոր սենեակներ կամ դպրոցի շէնքում:
Իսկ եթէ ոչ մինը և ոչ միւսը յարմար տեղ չու-
նենան, միայն այդ դէպքում կարելի է նիստ անել
մասնաւոր մի տնում :

15. Ծխական ժողովը առաջին անգամ կանո-
նաւոր կարող է համարուիլ, եթէ ներկայ եղողների
թիւը ամբողջ ծխականների ժուկի կիսից աւելի է :

16. Եթէ առաջին անգամ ժողով չկայտնալ.
Երկրորդ անգամ կը հրաւիրուի ժողով, որի ժամանակ
իրաւունք կը համարուի միմիայն ներկայ եղողների
թիւը հմաք քոնել և նրա կէսից—մէկով աւելին
բացարձակ առաւելութիւն ընդունել ժողովի նիս-
տը անգործութեան չգատապարտելու համար :

Մանօթութիւն.—Իսկ եթէ երկրորդ անգամին էլ ներ-
կայից թիւը շատ փաքր համարուի ժողով կայացներու հա-
մար, այդ դէպքում ծխական կամ վիճակաւոր և կամ Գոր-
ծակալ քահանան պարտաւոր է դիմել Հոգեսոր Խշանու-
թեան կարգադրութեան սպասելով .

17. Ծխական ժողովներին կը նախազահեն Զու-
ղայում Թեմակալ Առաջնորդի Փոխանորդի կամ ներ-
կայացուցիչը. Թէ հրաւում Գործակալ Քահանան.
փոքր քաղաքներում վիճակաւոր Քահանան. իսկ
Թեմի գիւղերում—Գործակալ քահանան կամ նորա
ժողովաւութեամբ՝ ծխական Քահանան :

18. Ծխական ժողովի արձանագրութիւնը կազ-
մելու համար ժողովը ընտրում է մի քարտուղար.

բացի դրանից ընտրում է քուէտուփի վրայ հսկող քննիչներ և անգրագէտների փոխարէն թերթիկների վերալ գրողներ :

19. Նախագահի պաշտօնն է ժողովի բոլոր գործողութիւնների կանոնաւորութեանը, և ժողովի կարգապահութեանը հսկել, թոյլ չտալ որ ժողովի վալելութեան դէմ մի որ և է գործ կատարուի :

20. Նախագահը իրաւունք ունի ժողովում անկարգութիւն անողներին դիտողութիւն անել և կարգի հրաւիրել. եթէ անուղալք մտիկ չանեն և դարձեալ շարունակեն իրանց անկարգութիւնը, ալն ժամանակ նախագահը ժողովին լայտնելով դորանց անկարգութիւնը, կարտաքսէ այն օրուայ ժողովի նիստից :

Իսկ եթէ ժողովի անդամներից շատերը անկարգապահ լինեն և չուզեն նախագահի դիտողութեանց և նկատողութեանց հնագանգել. նախագահը իրաւունք ունի նիստը փակել, երկրորդ անգամ նիստ է հրաւիրում. եթէ անկարգութիւնը մեծամասնութեան կողմից շարունակուելու լինի, նախագահը ժողովը փակելով պարտաւոր է զեկուցանել Հոգեւոր Խշանութեան :

21. Իւրաքանչիւր ծխական ժողովներում մի ձախ և մի քուէ ունի :

22. Այն ծխականը որ բանաւոր պատճառաւ բացակալ է լինում, իրաւունք չունի իւր ձախը կամ

քուէն ուրիշին յանձնելու. բայց կարող է զրաւոր յայտնել իւր կարծիքը եթէ մի հարցի մասին է այն կամ ոչ ասել. իսկ եթէ ընարութիւն է կատարուելու կարող է իւր քուէթուղթը ներփակեալ նամակաւ ուղարկել նախագահին ընդունուած ձեւով :

23. Որ և պաշտօնի համար ընտրութիւն կատարելուց առաջ ի գիւրութիւն ժողովականաց, նախագահը ժողովականաց խորհրդակցութեամբ պատրաստելու է եռապատիկ թիկնածուներ և ապա քուէարկէ. ընտրողք իրաւունք ունեն ցուցակից դուրս էլ արժանաւորին քուէ տալ: Նոյնպէս ժողովականներ իրաւունք ունին քուէ տալ բացակալ եղող անձանց, եթէ երաշխաւորեն միայն, որ ընտրելիները չեն մերժի ստանձնելու առաջարկուած պաշտօնը :

24. Ընտրութիւնները կը կատարուին գաղտնի քուէարկութեամբ, որի համար բաժանւում են թերթիկներ նախագահի կնքով դրօշմուած կամ ստորագրուած. այդ թերթիկների վերալ ժողովականները պիտի գրեն ընտրեալի անունը և ազգանունը որոշ և պարզ :

25. Քուէարկուած թեկնածուների քուէները հաշւում, կարգում և նշանակում են. ապա մեծամասնութեան քուէն ստացողը կը յայտարարուի ընտրուած :

26. Ծխական ժողովը փակելուց առաջ քարտուղարը կազմած արձանագրութիւնը կարդում է,

որի մէջ կարգով պիտի լիշուած լինին ժողովում
կալացրած որոշումները և քուէարկութեանց ար-
դիւնք : Արձանագրութիւնը կարգալուց և ուղղե-
լուց յետոյ բոլոր ժողովականները պարտաւոր են
ստորագրել նոյն այդ ժողովում :

27. Ժողովի որոշումների և ընտրութիւնների
դէմ բողոքով ժողովականք իրաւունք ունին իրանց
ստորագրութիւնների մօտ աւելացնել այս երկու
բառը. «բողոք ունիմ» և ապա ոչ ուշ քան երեք
օր գրաւոր բողոքը պարտի ներկալացնել ժողովի
նախագահին :

28. Ծխական ժողովի նախագահը թէ ժողովի
արձանագրութիւնը և թէ բողոքները, եթէ կան,
պարտաւոր է ժողովի օրից առ առաւելն մի շա-
բաթ յետոյ ուղարկել Հոգենոր Իշխանութեան կամ
ի հաստատութիւն և կամ ի տնօրէնութիւն :

29. Հոգենոր Իշխանութիւնը առ առաւելն մի
ամսուայ ընթացքում յայտնում է ծխականների ընտ-
րութեան հաստատութիւնը, եթէ օրինաւոր է ե-
ղած և կամ բեկանումը, երբ այդ ընտրութիւնը
կատարուած է եղել հակառակ սոյն կանոնների :

30. Քաղաքներում և գիւղերում նոր եկեղեցի-
ներ շինելու համար հասարակութիւնը պարտաւոր
է ժողով գումարել և ապա ժողովի արձանագրու-
թիւնը եկեղեցու շինութեան համար երեցփոխի և
Գործակալ քահանալի միջոցաւ ուղարկել Հոգենոր

Իշխանութեան, յայտնելով իրանց նիւթական մի-
ջոցները և խնդրել շինութեան համար թոլլտուու-
թիւն և յատակագիծ :

ԵՐԵՑՓՈԽ ԵՒ ՀԱՇՈՒԵՑԵՍ

31. Իւրաքանչիւր եկեղեցւոյ համար ընտրու-
մում է մէկ երեցփոխ, որ եկեղեցւոյ գոյքերը կա-
ռավարում է և ընթացիկ գործերը կարգադրում: Եւ
երկու հաշուետեսներ կընտրուեն, որոնք երեցփո-
խի հաշիւնները քննում են և ստուգում :

32. Երեցփոխների և հաշուետեսների պաշ-
տօնի շրջանը երեք տարի է :

33. Պաշտօնի շրջանը լրացրած երեցփոխը կա-
րող է վերընտրելի լինել, այն պարագայում միայն,
որ իւր հաշիւնները քննուած են հաշուետեսներից
և ընդունուած ծխական ժողովից իրու ստոյդ ու
անթերի և գործունէութիւնը անպարսաւ ճանա-
չուած :

34. Երեցփոխները պարտաւոր են հսկելու ե-
կեղեցու արդիւնքների, եկեղեցապատկան կալուած-
ների և եկեղեցական գործերի կանոնաւոր ընթաց-
քի վերայ. Ժամանակին հոգալ եկեղեցւոյ անհրա-
ժեշտ պէտքերը (խունկ, մոմ և ալին). Եկեղեցական
անօթները, զգեստները, մատեանները և եկեղեցւոյ
ըոլոր կահ կարասիքը մտքուր և վայելուչ վիճա-
կում պլահել :

35. Իւրաքանչիւր երեցփոխի Հոգեսր Իշխանութիւնից տրւում է երկու ժապաւինեալ տումար, որոնցից մէկի մէջ ցուցակագրելու է եկեղեցւոյ ոսկեղէն և արծաթեղէն անօթները, զարդերը, եկեղեցւոյ մատեանները և բոլոր կահ կարասիքը. նոյն մատեանում պիտի արձանագրուեն նաև եկեղեցւոյ շարժական և անշարժ կալուածները իրանց արժեքով կալուածագրերի համառօտ բովանդակութեամբ: Խոկ միւս մատեանում պիտի գրուին եկեղեցւոյ մուտքը և ծախքը:

Ծանօթութիւն.—Ոչ պաշտօնական տեսրերի և թղթերի վերայ գրուած հաշիւնները երրեք ընդունելի չեն:

36. Երեցփոխները, իրանց մօտը զտնուած եկեղեցապատկան գումարից իրաւունք ունին ծախսելու եկեղեցւոյ անհրաժեշտ կարիքների համար, գիւղերում հինգ թուման. քաղաքներում՝ տասն թուման:

Խոկ եթէ աւելին ծախսելու կարիք զգացուի, այսինքն եկեղեցւոյ կամ կալուածքների նարոգութեան համար, այն ժամանակ ծխական ժողով պարտի հրաւերել տալ և ալդ մասին ժողովի համաձայնութիւնը ստանալուց յետոյ, արձանագրութիւնը, ուր պիտի նշանակուած լինի լինելիք նորոգութիւնը և ծախսի գումարը, մի խնդրագրով գործակալ կամ վիճակաւոր քահանայի միջոցաւ ուղարկել Հոգեսր Իշխանութեան թոլլտութիւն ըստանալու համար:

37. Առանց Հոգեսր Իշխանութեան և ծխական ժողովի գիտութեան արգելում է փոփոխել,

ծախսել եկեղեցական գոյք կամ կալուած, նոյն իսկ նորեր գնելը :

38. Երեցփոխները պարտաւոր են իրանց մօտ գտնուած եկեղեցապատկան գրամները հաշուետեսների խորհրդով շահեցնել ապահով տեղերում, պատասխանատութիւնը իրանց վրայ առնելով, եթէ դրամները կորչեն:

39. Եկեղեցական գումարների քանակութիւնը երբ հասնի հարիւր (100) թումանի, այն ժամանակ երեցփոխը պարտաւոր է ուղարկել գումարը Հոգեսր Իշխանութեան, որպէս զի նոյն եկեղեցւոյ անունով գումարը ապահովուի մի բանքում:

40. Երեցփոխները պարտաւոր են խստիւ հըսկել, որպէս զի մկրտութեան, պսակի և ննջեցեալների համար սահմանուած լուսագինները և աւետարանների ուխտագրամները գանձուին և նշանակուին ել և մտից մատեաններում:

41. Ամենայն տարի Դեկտեմբեր ամսոյ վերջը գործակալ կամ վիճակաւոր քահանայի ներկայութեամբ (յօդուած 11) երեցփոխները հաշիւ պարտին ներկայացնել ծխական ժողովին, որտեղ քննելուց յետոյ, եթէ ուղիղ գտնեն, վաւերացնելով մի օրինակ ևս ալդ հաշուից գործակալ կամ վիճակաւոր քահանայի միջոցաւ պարտին ուղարկել Հոգեսր Իշխանութեան:

42. Նոյնպէս եկեղեցապատկան թէ անշարժ և թէ շարժական գոյքերի և դրամագլխի մի ցուցակ վաւերացուած երեցփոխի, հաշուետեսների, ծխական քահանալի և գործակալի ստորագրութեամբ ամենայն տարի պիտի ուղարկուի Հոգեոր Իշխանութեան :

43. Երեցփոխի և հաշուետեսների պաշտօնապարութեան երեք տարին լրանալուց յետոյ ձեռնարկում է նոր ընտրութեան, բայց նախապէս երեցփոխի հաշիւները պիտի ներկայացուին ի քննութիւն. իսկ եթէ երեցփոխը ժամանակին հաշիւ չի ներկայացնում կամ ներկայացրած հաշիւները լինին անբաւարար և վիճելի. այս դէպքում ծխական ժողովը իսկոյն պիտի նոր երեցփոխ և հաշուետեսներ ընտրէ, հին երեցփոխը պաշտօնից հեռացրած համարելով և պատասխանատուութեան ենթարկելով նրան իր հաշիւների համար :

44. Եթէ երեցփոխը բացակայի իւր տեղից կամ անկարող լինի պաշտօնավարելու և կամ ծխական ժողովը նոր երեցփոխ չէ ընտրած, երեցփոխի պաշտօնը մինչև նորի ընտրութիւնը և հաստատութիւնը պարելու են հաշուետեսները :

45. Հին երեցփոխը պարտաւոր է շարունակել իւր պաշտօնը և պատասխանատու է մինչև նորի ընտրութեան և հաստատաթուղթ ստանալը Հոգեւոր Իշխանութիւնից և մինչև բոլոր կալուածների և երերի լանձնումն նոր երեցփոխին (լոդ. 29):

46. Նոր երեցփոխը հաստատութեան թուղթը ստանալուց յետոյ առ առաւելն մի շաբաթից պարտաւոր է ստանալ հին երեցփոխից ըստ արձանագրութեան տումարի եկեղեցւոյ հաշիւների մատեանը, կանխիկ գումարները, եթէ կան, անօթեղէնք զարգեղէնք և կարւածները ներկայութեամբ գործակալ և ծխական քահանալի և հաշուետեսների:

47. Հաշուետեսները պարտաւոր են միշտ հետեւել երեցփոխի գործունէութեան, երեք ամիսը մի անգամ ստուգել եկեղեցւոյ հաշիւները և ստորագրել իրանց ձեռացագրով և տարուայ վերջը իրանց գիտողութիւնները յայտնել ծխական ժողովին :

48. Եթէ հաշուետեսները նկատեն որ և է զեղծում երեցփոխի հաշիւների կամ գործունէութեան մէջ, պարտաւոր են իսկոյն գրաւոր յայտնել գործակալ քահանալին ինդըբելով կարգադրութիւն:

ՔԱՀԱՆԱԼՈՒԹԻՒՔ ԵՒ ՔԱՀԱՆԱԼՔ

49. Այն անձինք, որոնք փափագում են Հոգեւոր կոչում ընդունել՝ քահանայ լինել, պարտաւոր են ներկայացնել Հոգեոր Իշխանութեան ծխական ժողովի համախօսականի հետ նաև ուսման-կրթութեան վկայականը, եթէ ուսել են որ և է օրինաւոր դպրոցում: Աւսման վկայական չունեցողները պէտք է առ նուազն երեք տարի սովորեն Զուղալի

կեդրոնական գալրոցում, որոշուած քննութիւնը տալու համար :

50. Քահանալացուների համախօսականները պիտի կազմուեն միմիայն ծխական ժողովում և ստորագրուեն նոյն ժողովում և ծխական ու գործակալ քահանայք ստորագրելով հաստատեն :

Ծանօթութիւնն.—Անհրաժեշտ է համախօսականի հետ ուղարկել նաև քահանայացուի ծննդեան վկայականը և դրաւոր վկայութիւն նրա վարքի ու բարքի և նախկին պարագմունքի համար :

51. Քահանայք պարտ են հոգ տանել եկեղեցւոյ արտաքին և ներքին մաքրութեան վերայ, աշխատելով եկեղեցին ըստ ամենայնի մաքուր և վայելուչ պահել. և եթէ նկատեն, որ եկեղեցում վերանորոգութեան կարիք կայ պարտաւոր են յայտնել երեցփոխին հարկ եղածը կարգագրելու համար:

52. Ամենայն օր քահանաները պարտաւոր են կատարել առաւօտեան և երեկոյեան ժոմերգութիւնը. իսկ կիւրակէ և տօն օրերին Ս. պատարագ մատուցանել :

53. Քահանաները պարտաւոր են ճշդութեամբ նշանակելու իրանց տրուած պաշտօնական եկեղեցական մատեաններում ծնուածների, մկրտուածների, պսակուածների և ննջեցեալների անուններն ու ազգանուններն իւրաքանչիւրի համար յատկացուած մատեաններում :

54. Օրինակատարութեանց մատեանները քահանաները պարտաւոր են մաքուր պահել և տարուայ վերջը յանձնել գործակալ քահանային և նորը ստանալ :

55. Խստիւ արգելում է եկեղեցիներում ցորեն, զարի և այլ մթերքներ ամբարել, որի համար պատասխանատու կը լինին քահանան, երեցփոխը և գործակալ քահանան :

56. Եկեղեցական գրքերի, ս. անօթների և այլ իրեղէնների ցուցակից մի օրինակ պիտի տրուի ծխական քահանային, որովհետև եկեղեցուց որ և բան կորչելու դէպքում բացի երեցփոխից պատասխանատու է նաև քահանան :

57. Քահանայք պիտի աշխատեն, իրանց քաղաքներում կամ զիւղերում մասնաւոր մարդկանց տներում եղած աւետարաններն ու մասունքները, որոնց համար ուխտի են գնում, չպահուին տներում և իրենք երբէք տներում ուխտ չպիտի կատարեն. այլ պարտին ժամանակին լուր տալ գործակալին, որպէս զի նա միջոցներ ձեռք առնէ աւետարանները կամ մասունքները եկեղեցին փխադրելու համար :

58. Քահանաները պէտք է ըստ կարելոյն վայելուչ հագնուեն և երբէք առանց վերարկուի և գլխարկի չըշրջեն փողոցներում և չերեին հասարակութեան մէջ :

59. Իւրաքանչիւր քահանալի պարտքն է աշխատել համոզելու, որ վերացուին ննջեցեալների առթիւ տրուած հացկերոյթները. որոնց ինքը երբէք չպիտի մասնակցի, և աշխատի հեռու պահել ժողովրդին այդպիսի տնաքանդութիւններից :

60. Քահանաները իրաւունք չունին անմիջական յարաբերութիւն ունենալու Հոգեոր Իշխանութեան հետ. Եթէ որ և է ինդիր կամ բողոք ունին, պարտաւոր են իրանց բողոքը ներկայացնել իրենց գործակալ քահանալին ուր որ հարկն է հասցնելու համար. Հակառակ դէպքում ներկայացուած խնդիրը կամ բողոքը կը մնայ անհետեանք :

61. Քահանաներից պահանջւում է անպայման հնագանդութիւն գործակալ քահանալին :

62. Քահանաները իրաւունք չունին առանց գործակալ քահանալի հրամանին պսակ կատարել :

63. Քահանաները իրաւունք չունին առանց գործակալ քահանալի գիտութեան և թոյլութեան հեռանալի իրանց եկեղեցուց. Հակառակ դէպքում կենթարկուին խիստ պատասխանատութեան և պատժի:

Ծանօթութիւն.—Միմիայն կարեսը գործով մօտակայ տեղերը կարող են գնալ. բացակայելով եկեղեցուց ոչ աւելի քան երկու օր :

64. Եկեղեցական Ս. Խորհուրդները—պսակը, մկրտութիւնը անպայման կերպով պիտի կատարուեն

Եկեղեցում: Դակ եթէ մկրտւող մանուկը ստուգիւ հիւանդ է և անկարելի է տանել եկեղեցի, ալդ դէպում գործակալ քահանալի հրամանաւ թոյլատրում է տանը կատարել մկրտութիւնը :

65. Ս. միւռոնը պարտաւոր են պահել ինամքով եկեղեցւոյ բեմի վրայ աջակողմեան խորհրդարանում:

66. Եթէ ժողովուրդը քահանալից դժգոհ լինի և բողոքել յանկանայ, պարտաւոր է ներկայացնել բողոքը գործակալին, որ քննութիւն կատարելով իրողութիւնը պարտաւոր է զեկուցանել բողոքագրի հետ միասին Հոգեոր Իշխանութեան և սպասել կարգադրութեան :

ԳՈՐԾԱԿԱԼ ՔԱՀԱՆԱՆԵՐ

67. Պարսկա—Հնդկաստանի Թեմի գիւղերի և քաղաքների ազգալին և եկեղեցական գործերի, քահանաների ընթացքի և պաշտօնավարութեան և սոյն կանոնադրութեան գործադրութեան համար Թեմիս Հոգեոր Իշխանութիւնը կարգում է գործակալ քահանաներ :

68. Գործակալ քահանաների պարտաւորութիւն է

ա. Հսկել իրանց շրջանի եկեղեցապատկան դրամների, եկեղեցիների և ուխտադրամների վերայ, որպէս զի նրանք չը լափշտակուին մասնաւոր մարդկանցից :



- բ. Հսկել քահանաների վերայ, որպէս զի նոքա վայելուչ պահեն իրանց և անթերի կատարեն իրենց պաշտօնն ու պարտականութիւնները :
- գ. Պահանջել քահանաներից, որ նոքա ճշտիւ արձանագրեն մատեաններում ծնուածների, մկրտուածների, պոակուածների և ննջեցեալների անունները և այլն :
- դ. Հոգ տանել եկեղեցիների բարեզարդութեան և մաքրութեան վերայ :
- ե. Պսակի հրամաններ տալ :
- զ. Խիստ հսկել, որպէս զի հակառակ հայաստանեալց եկեղեցու և Հայրապետական կոնդակների ամուսնութիւններ չկատարուին :
- է. Գործակալք իրանց գործակալութեան մէջ առժամանակ բնակող օտարական հայերին, լինի պարսկահպատակ լինի օտարահպատակ, իրաւունք չունին առանց Հոգեւոր Իշխանութեան պսակի հրաման տալ :
- ը. Հաւաքել որոշուած և սահմանուած Աթոռահաս եկամուտները և ժամանակին հասցնել Հոգեւոր Իշխանութեան :

69. Եթէ գործակալութեան շրջանում մասնաւոր տներում կան աւետարաններ և այդ մասին յայտնել է գործակալին՝ ծխական քահանան. գոր-

ծակալը պարտաւոր է ամեն ջանք գործ դնել աւետարանը կամ մասունքը եկեղեցին տանելու համար. իսկ երբ այդ ըրբաջողուի պէտք է անյապաղ այդ մասին յայտնել Հոգեւոր Իշխանութեան :

70. Գործակալները նախ քան պսակի հրաման տալը, պէտք է պահանջեն ծխական քահանալից յայտարարութիւն, որի մէջ նշանակուած պիտի լինի ամուսնացելոց տարիքը և ճիւղագրութիւնը, երբ նկատեն որ ոչ մի արգելք չկայ, այն ժամանակ պիտի տան հրամանագիրը :

71. Ամենալին տարի գործակալք պարտաւոր են ներկայացնել Հոգեւոր Իշխանութեան կատարուած պսակների յայտարարութիւնները :

72. Ամուսնացող զոյգերից տղան լինելու է առնուազն քսան տարեկան. իսկ աղջիկը տասն և հինգ տարեկան։ Խսպառ արգելում է տարիքը անցկացրած մարդկանց՝ փոքրահասակ օրիորդների հետ պըսակւելը :

73. Նշանադրութիւնը պիտի կատարել առանց արարողութիւնների մի միայն պահպանիչով. իսկ իսկական նշանադրութիւնը կը կատարուի պսակադրութեան օրը :

74. Երբ Զարմահալ և Փէրիա գաւառներում գործակալներին եթէ որ և է բողոք կամ դիմում ներկայացնեն, գործակալները պարտաւոր են ու-

դարկել Հոգևոր Խշանութեան իրանց ստացած օրից ոչ ուշ քան 12 օր. իսկ միւս պաւառներում՝ գործակալները պարտին ուղարկել ոչ ուշ քան 25 օր. հակառակ դէպքում պատասխանատու են իրանք :

75. Այն քահանաները, որոնք չեն հնագանդում գործակալին, կամ հակառակ սոյն կանոնադրութեան որ և է զեղծում կը գործեն. գործակալը պարտաւոր է արձանագրութիւն կազմել ստորագրել տալով գիւղի կամ քաղաքի պատուաւոր մարդիկներին և ուղարկել Հոգևոր Խշանութեան իտնօրէնութիւն :

76. Գործակալները պարտաւոր են տարին մի անգամ ընդարձակ տեղեկագիր պատրաստել և ուղարկել Հոգևոր Խշանութեան. տեղեկագրում մանրամասն յիշուած պիտի լինի իրանց գործակալութեան մէջ եղած եկեղեցիների թիւը, ժողովրդի թիւը (երկսեռ շնչազրութիւն), եկեղեցիների ունեցած պատրաստի դրամները, քահանաների թիւը, նոցա դրութիւնը և առ հասարակ հայ հասարակութեան վերաբերեալ տեղեկութիւններ :

77. Ամեն ոք, լինի ծխական կամ երեցփոխ— հաշուատես, քահանայ կամ գործակալ, պարտաւոր են սոյն կանոնադրութեան համաձայն վարուել և ընթանալ ազգային կրթական և եկեղեցական գործերում. հակառակ դէպքում խիստ պատասխանաւութեան կենթալկութիւններ :



104

105

3696